

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔ

Դժբաշտ զիպուած յէ :

ԲԱԶՄԱԿԵՐԻՐԱԼ ՈՐ չուզեր խեղճ գիպուած ներու գուժաբեր ըլլալ, մանաւանդ իր ամենէն զուարճարկ մասանցը մէջ, ինչպէս են Մանրա վէպն ու ժամանակակից դէպքը . բայց երբ եղած գծադրութիւնը ուրիշներու կրնայ խրատ մը ըլլալ զգուշութեան, կամ ճար մը գտնելու եղածին, ան ատեն մենք ալ չենք կարծեր որ անհա ճոյ բան մը ըրած ըլլանք այնպիսի դէպքերն ալ յիշատակելով . որոնցմէ մէկն է նաև առաջիկայ գիպուածս :

ՆԱՓՈՒՒ . Հարսնացու աղջկան մէկը երեկոյեան զուարճութեան մը հրաւիրուած ըլլալով կ'ելէ կը հագուի կը սգուի . ու ճրագը գետին դրած հայրին գիմար մէյմը շուրջ կու գայ՝ տեսնելու թէ արդեօք զգեստը ամէն գիաց կոկիկ է . աս ըսելուն բարակ իտիւն ճրագին բոցին մօտենալն ու բռնկիլն մէկ կ'ըլլայ . խեղճը աս տեսնելուն կը շփոթի ու կը սկսի ասդիս անդին վազվզել, որով գետինը քանի մը կտոր լաթ կայ եղեր անոնք ալ կը բռնկին, ու բոլոր խուցը բորբոքած կ'երևնայ . աղջկան հորաբոյրը վրայ կը հասնի, բայց զգեստները մարելուն տեղը իր թեւերն ալ կ'այրին կը մրկին . թաղին ոստիկանութիւնն (փողիցիան) ալ հոն կը փութայ . բայց բանը բանէ անցած է եղեր . երկրորդ օրը խեղճ աղջկը հոգին կ'աւանդէ, հորաբոյրն ալ հիւանդ է : — Ասանկ գիպուածի մէջ շփոթիլն ու շարժումները շատ փնտասկար է, աղէկ ճամբան վերմակի կամ գորգի պէս բան մը վրան առնել ու գետին փռուիլն է . բայց նախազգուշութիւն ընողին ասոնք ալ աւելորդ են :

Երեսին վրայ նոր մանեմ յէ :

ԱՄԵՐԻԿԱ . Կը գրեն թէ հարվարտ քաղաքին դիտանոցին աստղաբանները՝ որ են Պոնտ հայր ու որդի Երեմիան վրայ երրորդ մանեակ մ'ալ տեսեր են, որն որ Հռոմայու գիտարանը գուշակեր էր թէ զուգահեռական շատ մանեակներ պիտի ունենայ Երեմիան : Արակոյ կ'ըսէ թէ աս բանս ստուգելու համար պէտք է ամէն մէկ մանեակին միջոցը եղած մուծ կտորը գիտել է թէ արդեօք անոնց մէջէն աստղ կ'երևնայ թէ չէ . աս բանս աւելի գիւրդին կ'ըլլայ երբ մուրախը հասնի երկնքին ան կողմերը ուր որ ծիր կաթին գոտիներն կան, որովհետև աստղերը ան տեղումնք խիտ ըլլալուն դիտողութիւնն ալ գիւրդին կ'ըլլայ :

Այսուհետեւ գիպուած յէ :

ՎԵՆԵՍ . Անյուշութեան կամ թէ զգացողութիւնը կորսնցնելու գիպուած մը եղեր է Վենիսի թագաւորական հիւանդանոցին մէջ . տասներ

հինգ տարուան աղջիկ մը՝ որուն վրայ մագնիսացման փորձեր կ'ընէ եղեր Շոտէր բժիշկը, անյուշութեան մէջ կ'իյնայ, ու երեսուն օրէն աւելի է որ կ'ըսեն քնափութեան մէջ է, ու ամենեւին չէ արթնցած, ու բերանը բան մը գրած չէ :

Նոր Բնէկ :

ԼՈՏՐԵ . Քրորինկէմ ճարտարապետը առաջարկեց աս մօտերս՝ որ Պրընհէտ քաղաքը Լիվրփուլին հետ հաղորդէ, Մերսի գետին տակէն Բնէկ մը բանալով . ասոր մէջ պիտի ըլլայ չոգէկառաց երթիկի համար երկու ռահ, և լրիկ մը ոտքով գնացողաց համար : Աս մեծագործ շինութեան ծախքը պիտի ըլլայ 250,000 լիւրայ սթէւլին որ է ըսել 6,000,000 ֆռանք :

Ածխահանքի յէ Բուլիլէ :

ՄՕՏԵՐՍ Ռօումարի ածխահանքին մէջ որ Ռօշերհէմին քովերը կ'իյնկայ, աղէտալի գիպուած մը կը հանգիպի : Առաւօտեան ժամը 7ին միջոցները, երբոր բանուորները փորելու փոսերէն մէկուն մէջ աշխատելու իջեր էին՝ դրսէն որոտման նման ահաւոր ձայն մը լսուեցաւ, ու մէյմ'ալ տեսնես, որ փոսը հրաքիւի բաժակ մը վարձած՝ ահագին բարձրութեամբ բոցերու մէջէն ածխի սոսկալի ժայռ մը ու բոլոր պատրաստուած գործիքները գուրս կը ժայթքեցնէր : Ճայթման ահաւոր գողգոջնէն, հանած բոցէն, ու գուրս նետած բաներէն որ ինչուան 200 մետր հեռաւորութեամբ կը հասնէին, եղածը իմացուելով ամէն կողմանէ օգնութեան վազեցին, ու սկսան ճար ճարակ ընել որ փոսին մէջի մնացած խեղճ ողորմելի գործաւորներուն կեանքը աղատեն : Բայց ափսոս . ինը ժամ աշխատելէն ետքը վաթսուն գիակի չափ գուրս հանեցին, որոնցմէ ոմանք մահացու վիրաւորուած էին, մնացածները բոլորն ալ մեռած . ոմանք ալ այնպէս խանձեր մրկեր էին՝ որ և ոչ իսկ կրնային ճանչցուիլ : Այս աղէտալի դէպքին ժամանակը փոսին մէջ գտնուող բանուորներուն թիւը եօթանասուն հոգի էր, ասոնցմէ հազիւ թէ տասը հոգի անվտանգ կրցան խաղտիլ :

Ածխահանքաց այսպէս բռնկելուն պատճառը թէ ինչ բանէ առաջ կու գայ, և թէ ինչպէս աս գծադրութեան առաջը կրնայ առնուիլ դիւրին կերպով մը, պիտի տեսնենք բնաւորութեան սկզբանց Ե դասին մէջ :